ՀՏԴ 334.012.3

Ա.Ա. ԱՍԼԱՆՅԱՆ, Ա.Մ. ՂԱՐԱՔԵՇԻՇՅԱՆ

ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՊԱՏԿԵՐԸ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ
(*Վանաձոր*)

Ներկայացված են Լոռու մարզում հարցումների միջոցով ստացված միգրացիայի ցուցանիշները և դրանց համեմատական ուսումնասիրությունը ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունից ստացված արդյունքների հետ: ՀՀ Լոռու մարզի ութ համայնքների 80 ընտանիքներում կատարված հարցումներից պարզ երևում է, որ միգրացիայի խնդիրը հրատապ է մարզում և պահանջում է անհապաղ լուծում:

Առանցքային բառեր. միգրանտ, միգրացիա, ընտանիք, կարիք, գործազրկություն:

Միգրացիան անհատների կամ սոցիալական խմբերի բնակավայրի փոփոխության գործընթացն է, որն արտահայտվում է նույն երկրի այլ տարածաշրջան կամ այլ երկիր տեղափոխման ձևով: [1,22]

Աշխարհում դեռևս 2005թ.-ին մոտ 191 մլն մարդ՝ աշխարհի բնակչության 3%-ը, ապրում էր իր հայրենիքից դուրս: Իր աճող ծավալների պատճառով միգրացիան լուրջ խնդիր է դարձել թե՛ զարգացող, թե՛ զարգացած երկրների համար: Միգրանտների մեծ մասը հատում է սահմանը՝ ավելի բարենպաստ տնտեսական և սոցիալական հնարավորություններ ստանալու համար: Աշխարհում միգրանտների ամենաարագ աճող խումբը տնտեսական միգրանտներն են: Հայաստանում նույնպես միգրացիան աճում է: Ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունների կողմից կատարված հետազոտությունների՝ Հայաստանում միգրացիան ամենամեծ թվով աչքի է ընկնում Շիրակի, Լոռու, ապա Արագածոտնի և Տավուշի մարզերում: [2,120]

Հետազոտության համար ընտրել ենք Լոռու մարզը և հարցումներ կատարել Վանաձոր, Ստեփանավան, Սպիտակ, Տաշիր, Նալբանդ, Ագարակ, Օձուն, Կաթնաջուր համայքների 80 ընտանիքներում:

Հատկանշական է, որ ընտանիքների մի մասը չունենալով մշտական աշխատանք ունեցող անդամ, չունի նաև աշխատանքային միգրանտներ: Այսպիսի ընտանիքներում սովորաբար կարիքները հոգում են աղքատության նպաստների կամ ժամանակավոր աշխատանքից ստացված գումարների միջոցով: Հարցվածների մեջ բավականին մեծ մաս են կազմում աշխատանք չունեցող և միգրանտի կողմից դրամական փոխանցումների հաշվին կենսական պայմանները բավարարող ընտանիքները (աղ. 1): Ուստի պարզ է, որ հենց մշտական աշխատանք չունեցող ընտանիքներն են հակված միգրացիայի:

Աղյուսակ 1

Ընտանիքների թվաքանակն ըստ աշխատողների և միգրանտների

Կարգավիճակը	**Ընտանիքների թիվը**
Ընտանիքում կա և՛ հիմնական աշխատող, և՛ աշխատանքային միգրանտ	6
Ընտանիքում չկա ոչ՛ հիմնական աշխատող, ո՛չ աշխատանքային միգրանտ	25
Ընտանիքում կա հիմնական աշխատող, չկա աշխատանքային միգրանտ	16
Ընտանիքում չկա հիմնական աշխատող, կա աշխատանքային միգրանտ	25

Հետազոտության համար հարցվածներից խնդրել ենք նշել, թե մոտքանի՞ հոգի է կազմում իրենց մտերիմների շրջանը (հորեղբայր, հորաքույր, մորաքույր, քեռի, ընկերներ և այլն), և կա՞ն արդյոք նրանց մեջ միգրանտներ: Հարցվածների 98%-ը նշել է, որ մտերիմների շրջանում առկա են միգրանտներ: Ըստ 80 հարցվածներից ստացված տվյալների՝ 2325 մտերիմների շրջանում կա 852 միգրանտ, որը կազմում է ընդհանուրի 36,65%-ը: Մինչդեռ վիճակագրությունում կոնկրետ թվեր չկան, քանի որ երևույթը չի չափագրվում, միգրանտների զգալի մասը չի հետևում գրանցման այն կարգին, որը հաստատված է: Փոխարենը, համաձայն վիճակագրական ծառայության տվյալների, Հայաստանից մեկնողների 47%-ը աշխատանքային միգրանտներ են, մնացած 53%-ը՝ մշտական մեկնողներ: Նշված պատկերը չի համընկնում Լոռու մարզից ստացված արդյունքների հետ: Ըստ հետազոտության՝ Լոռու մարզից մեկնողների 80%-ից ավելին աշխատանքային միգրանտներ են. դրա մասին է վկայում նաև այն փաստը, որ հիմնականում միգրանտ են ընտանիքի հայրը և արու զավակը:

Հարցումների արդյունքում պարզվել է նաև, որ հարցվածների 41,17%-ը չի տեսնում իրեն միգրանտի կարգավիճակում: Հետաքրքրական է այն փաստը, որ վերջիններիս 82,1%-ը կին է, 17,9%-ը՝ տղամարդ: Բավականին մեծ տոկոս են կազմում այն անհատները, ովքեր պատրաստ են դառնալ աշխատանքային միգրանտ (58,83%): Ուշադրության է արժանի նաև այն փաստը, որ միգրանտների կարգավիճակում իրեն տեսնողներից 37,5%-ը բարձրագույն կրթություն ունեցող և ստացողներն են (աղ. 2):

Աղյուսակ 2

Ապագա միգրանտների տոկոսն ըստ կրթամակարդակի

Կրթություն	Տոկոսային ցուցանիշն ապագա միգրանտների մեջ (%)
Բարձրագույն	37,5
Միջին մասնագիտական	12,5
Միջնակարգ	50

Դժվար չէ գուշակել, որ միգրանտ դառնալու հիմնական պատճառը աշխատանքի բացակայությունն է, թեև նշանակալի դեր է խաղում նաև գործարարությամբ զբաղվելու համար անհրաժեշտ պայմանների բացակայությունը (աղ. 3):

Աղյուսակ 3

Միգրանտ դառնալու հիմնական պատճառների տոկոսային ցուցանիշ

Դրդապատճառները	Տոկոսային ցուցանիշը (%)
Տեղում աշխատանքի բացակայությունը	38,7
Ցածր աշխատավարձը	27,9
Մասնագիտությամբ աշխատատեղերի բացակայությունը	13,5
Գործարարությամբ զբաղվելու համար պայմանների բացակայությունը	10,1
Հայաստանի զարգացման հեռանկարների բացակայությունը	5,3
Իրավական անպաշտպանվածությունը	3,7
Այլ	0,7

Հետազոտության համար նպատակահարմար ենք համարել պարզել, թե ինչ նպատակով են հիմնականում մեկնում Հայաստանից (նկ. 1): Ըստ գծապատկերի՝ մեկնողների 52%-ը ցանկանում է մշտական բնակություն հաստատել այլ երկրներում, իսկ 41%-ը մեկնում են ժամանակավոր աշխատելու նպատակով: Հարաբերակցությունը մշտական մեկնողների և ժամանակավոր միգրանտների միջև փոխվել է՝ ի հաշիվ մշտական մեկնողների:



Նկ. 1. Մշտական և ժամանակավոր միգրանտների հարաբերակցությունը

Ըստ ՀՀ ԱՎԾ-ի տվյալների՝ Հայաստանից մեկնած միգրանտների գրեթե 70%-ը մեկնում է Ռուսաստանի Դաշնություն [3, 5], մինչդեռ մեր կողմից անցկացված հարցման արդյունքներով ՌԴ մեկնել ցանկացողները կազմել են ընդամենը 46%: Դա նշանակում է, որ հարցվածներն ավելի շատ ձգտում են Եվրոպական երկրներ և ԱՄՆ, սակայն որոշակի դժվարությունների հանդիպելով (վիզայի տրամադրում, լեզվական խնդիրներ և այլն)՝ ի վերջո դառնում են ռուսական միգրանտ (նկ. 2):



Նկ. 2. Պոտենցիալ միգրանտների նախընտրելի տարածաշրջանները

Հարցվածների մեջ ՌԴ մեկնել ցանկացող մարդկանց մեծամասնությունը որպես պատճառ նշել է հարազատների առկայությունը, լեզվի տիրապետումը, ինչպես նաև երկրի հոգեհարազատ լինելը: Այլ պատկեր է ԱՄՆ և Եվրոպա մեկնել ցանկացողների դեպքում: Նրանք որպես պատճառ նշել են երկրի բարձր զարգացածության աստիճանը, քաղաքակրթության մակարդակը, մարդու իրավունքների պաշտպանվածությունը, ինչպես նաև մասնագիտական մեծ հեռանկարների առկայությունը:

Այսպիսով, ուսումնասիրելով Լոռու մարզի միգրացիոն պատկերը, պարզ է դառնում, որ մարզում միգրացիան լուրջ հիմնախնդիր է, որը պահանջում է ոչ միայն մարզային, այլ նաև պետական կառավարման մարմինների կողմից լուծման հստակ ծրագիր:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Հակոբյան Կ., Գալոյան Դ., Աղաջանյան Լ.** Արտագնա աշխատանքային միգրացիա.- Երևան: Տնտեսագետ, 2014.-80 էջ:
2. **Պողոսյան Ս.** Աշխատանքի տնտեսագիտություն. Ուս. ձեռնարկ.-Երևան, 2004. -318 էջ:
3. Հայաստանի վիճակագրական տարեգիրք – 2016:
4. ԱՎԾ հրապարակում-Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2016 թվականին:

А.А. АСЛАНЯН, А.М. КАРАКЕШИШЯН

МИГРАЦИЯ В ЛОРИЙСКОМ РЕГИОНЕ

Представлены показатели миграции, полученные в результате социологических опросов в Лорийском регионе, и проведено их сравнение с результатами Национальной статистической службы РА. Опросы, проведенные в 80-ти семьях из восьми общин Лорийского региона, показали, что проблема миграции является срочной и требует немедленного решения.

Ключевые слова: мигранты, миграция, семья, регион, нужда, безработица.

A.A. ASLANYAN, A.M. GHARAQESHISHYAN

MIGRATION IN THE LORI REGION

The migration indices obtained through the surveys in the Lori region, and their comparison with the results of the RA National Statistical Service are presented. The surveys conducted in 80 families of the eight communities of the Lori region have shown that the issue of migration is urgent and requires an immediate solution.

Keywords: migrants, migration, family, need, unemployment.